

ԽԱՉԻԿ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ
բանասիրական գիյր. թեկնածու

**ԿՈՄԻՏԱՍԻ ԿԵԱՆՔԻ ԵՒ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ
ՏԱՐԵԳՐՈՒԹԻՒՆԻՅ**

«... Ոչ է պարմութիւն ճշմարիտ
առանց ժամանակագրութեան...»:

Մովսէս Խորենացի

1906 թ.

Յունուար 8, Թիֆլիս. «Նովի» շաբաթաթերթում հրապարակում է «Կանոնաւոր եւ
ներդաշնակ երգեցողութեան մասին» խորագրով յօդուածը, ուր դրուարարների խօսքեր կան
Կոմիտաս վարդապետի գործունէութեան վերաբերեալ:

«Նովի» 1908, թ. 1, էջ 9:

Յունուար 12, Էջմիածին. Կոմիտասը նամակ է գրում Փարիզ՝ Արշակ Չոպանեանին
եւ խնդրում է ուղարկել այն երգերի ցանկը («Նազար ու մի խաղ» ժող. Ա յիսնեակ), որոնք
համարում են անյաջող եւ պէրք է փոխարինուն նորերով: Միաժամանակ նա յայտնում է,
որ այդ երգերի եղանակներն արդէն սկսել է արարագրել եւ աւարտելուց յետոյ ուսումնասի-
րութեան հետ մեկտեղ կուղարկի:

Վերջում Կոմիտասը խնդրում է ողջունել Արմենակ Շահմուրադեանին եւ յայտնել, որ
«պարարագի արարողութեան դրկումը կուշանայ»:

ԴԲՆ, 1958, թ. 1, էջ 251:

Նոյն շրջանում, Էջմիածին. Կոմիտասը «Նազար ու մի խաղ» խորագրով ժողովր-
դական երգարանի Բ յիսնեակից մէկական օրինակ ուղարկում է Փարիզ՝ Պիեռ Օբրին եւ
Արշակ Չոպանեանին:

Անդ:

Փետրուար 15, Էջմիածին. Կոմիտասը մի գրութեամբ դիմում է ճեմարանի րեսուց
Գարեգին Յովսէփեանին. «Արարատահման եմ գնալու,- գրում է նա,- անձնական անհրաժեշտ
գործերով, խնդրեմ յայտնեցէք Նորին Վեհափառութեան ի բարեհաճ արտօրինութիւն»:

«Տեղեկագիր», 1956, թ. 9, էջ 107:

Փետրուար 25, Էջմիածին. Կոմիտասը եւ Գ. Լեւոնեանը մտադրում են Վաղարշա-
պատում «Գեղարուեստ» անունով մի գրական-գեղարուեստական հանդէս հրարարակել:
Երաժշտական բաժնի խմբագիրը լինելու էր Կոմիտասը, իսկ կերարուեստինը՝ Գ. Լեւո-
նեանը: Նանդէսին իր մասնակցութիւնն էր բերելու բանաստեղծ Յ. Յովհաննիսեանը: Այս

առիթով Գ. Լևոնեանը մի գրությունը դիմում է ճեմարանի վարչությանը. «Նպատակ ունենալով իմ պաշտօնակից և, Կոմիտաս վարդապետի հետ միասին առաջիկայ աշնանից Ս. Էջմիածնում հրապարակելու մի գեղարուեստական-գրական հանդես, այժմեանից դիմում եմք անում, ում յարկն է՝ պարշաճառը թոյլություն ստանալու»: Շարունակության մեջ Գ. Լևոնեանը խնդրում է րալ մի վկայական ճեմարանում չորս րարի ծառայելու վերաբերեալ, որպեսզի այլ փաստաթղթերի հետ միասին ներկայացնեն Երևանի նահանգապետին թոյլություն ստանալու համար:

Անդ:

[Փեպրուարի վերջ, մարտի սկիզբ], Վաղարշապատ. «Գեղարուեստ» անունով մի գրական-գեղարուեստական պարբերաթերթ հրապարակելու նպատակով, Լևոնեանը և Կոմիտասը վերցնում են համապատասխան փաստաթղթեր և ամսագրի հրապարակության իրաւունք ձեռք բերելու համար մի խնդրանքով դիմում են Երևանի նահանգապետին:

Գ. Լևոնեան, Յուլի, 1959, էջ 125:

Մարտ 22, Վաղարշապատ. Իր աշխատությունները րայել րալու համար, րասնամեայ ժամկետով Կոմիտասը մեկնում է Բեռլին: Նրա փոխարեն ճեմարանում երգեցողության դասաւոր և երգչախմբի ղեկավար է կարգում Ն. Խաչատրեանը:

ՊԲՆ, 1951, թ. 1, էջ 251:

«Արարատ», 1907, թ. 10, էջ 905:

Մարտ [25-27]. Նրաւարակչական նկարառումներով Գերմանիա եկած Կոմիտասը նամակ է գրում Փարիզ՝ Արշակ Չոպանեանին: Բացարկելով Բեռլին գալու շարժառիթները՝ նա միաժամանակ յայրնում է իր ձեռագիր աշխատությունների կորստեան մասին:

ՊԲՆ, 1958, թ. 1, էջ 252:

Ապրիլ 25-27, Բեռլին. Կոմիտասը գնել է Ա. Ռայզմանի «Երաժշտական երկի ձևը և բովանդակությունը», Կ. Վալենտինի «Շվեդական ժողովրդական եղանակներ», Օ. Թիրշի «Դաշնամուրային ֆրագիրովկայի և նուագակցութեան համառօտ դասընթաց», Ռիխտերի «Թեմարիկ աշխարանքի ուսմունք», Ֆ. Յուրայի «Արական խմբի գեղարուեստական կրթությունը», Ն. Բերլիոզի «Գործիքագիտություն» և Ռիմանի «Նարմոնիայի դասագիրք» վերնագրերով գերմաներէն գրքերը:

ԶԱԳԱԹ, Կոմիտասի ֆ. 844, 861, 870, 893, 895, 965, 988:

Ապրիլ 26, Բեռլին. Կոմիտասը նամակ է գրում Արշակ Չոպանեանին: Իր ուրախությունը յայրնելով Փարիզում գարնանը կայանայիք հայկական երեկոյթի հետաձգուելու առիթով, նա խոսարանում է աշնանը ինքը ևս մասնկցել: «Աշնան երեկոյթի համար, գրում է նա, դուք էլ մրաձէք, ևս էլ կմրաձեն և մի գողրիկ բան անենք»:

ՊԲՆ, 1958, թ. 1, էջ 252:

Մայիս 27, Բեռլին. Կոմիտասը նամակ է գրում Ա. Չոպանեանին և յայտնում է նրան, որ երեկոյթի (իսթքը Փարիզում հայկական նուագահանդես կազմակերպելու մասին է) գաղափարն իրեն շատ է ոգևորել, ապա անդրադառնալով երեկոյթի բնույթին՝ նա գրում է. «Որպեսզի հայ երաժշտությունը լաւ ըմբռնեն, նախքան երեկոյթը կազմելը (անհրաժեշտ է) մի դասախօսութիւն անել հայ ժողովրդական երաժշտութեան մասին ընդհանրապէս և մասնաւորապէս էլ եղանակների կազմութեան մասին, ապա նոյն ժողովրդական երաժշտութիւնը ցոյց տալ արդի գեղարուեստական միջոցներով բազմաձայնի վերածած»:

Վերջում Կոմիտասը խնդրում է տեղեկութիւններ հաղորդել, թէ ինչպիսին է լինելու ֆրանսիական խումբը, որ ըստ այնմ կարողանայ ընտրել ու նախապարաստել կարարութիւնը համարները:

ԴԲՏ, 1958, թ.1, էջ 253:

Յուլիս 12-15, Բեռլին. Կոմիտասը գնում է Ա. Կրիժեկի «Ձեռքի կուլտուրա նվագելու արուեստի մասին», Է. Սուրբոյի «Մարդկային ձայնի երակի էությունը» և «Մարածողութեան ու լեզուի երակի էությունը» վերնագրերով գերմաներէն գրքերը:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ. 866, 890, 997:

Յուլիս 18, Բեռլին. Կոմիտասը նամակ է գրում ճեմարանի տեսուչ Մեսրոպ մագիստրոս Տէր-Մովսիսեանին. «Այսօր ստացայ պաշտօնական գիրդ,- գրում է նա,- անմիջապէս պարասխանում եմ: Ես դեռ անցեալ տարուայ վերջում հրաժարուեցայ ճեմարանի ուսուցչութիւնից, որովհետեւ նեարդային սաստիկ տկարութիւն ստացայ, որով ցայսօր էլ տառապում եմ: Եթէ երգերիս և երկերիս տպագրութիւնը և իմ նիւթական ապրուստի հոգսը չլինէր, արդէն քաշուած կլինէի իմ խցիկի մէջ և, եթէ թողնէին հանգիստ, ինձ համար կաշխատելի գիպցածներս յոյս կհանէի: Այնպէս որ ինձ այլևս, իբրեւ ուսուցիչ ճեմարանի չսպասեն և ոչ մի անգամ, որ բացի տկարութիւնից, ուրիշ շահ չբերեց ինձ համար»:

ԲՏԱ, 1966, թ. 2, էջ 162:

Օգոստոս 17, Բեռլին. Կոմիտասը նամակ է գրում Արշակ Չոպանեանին: Նամակում ներփակ նրան է ուղարկում «Նայ գեղջուկ երաժշտութիւն» վերնագրով ուսումնասիրութեան տեւորը և խնդրում է մաս առ մաս թարգմանել, մինչև ինքը հնարաւորութիւն կունենայ ուղարկելու և միւս տեւորները: Կոմիտասը խնդրում է իրեն ուղարկել ֆրանսերէն թարգմանած երգերից մի քանիսը՝ «Նաբբան», «Գարուն ա, ձուն ա արել», «Չինար ես, կեռանալ մի», «Անձրեւն եկաւ», «Մարերի վրով գնաց» և «Էս գիշեր լուսը տեսայ»), որոնք նա իր ուսուցչական Ռ-իխարդ Շմիդտի խորհրդով ցանկանում էր թարգմանել տալ նաև գերմաներէն և ապա տպագրել «Բազմաձայն և միաձայն դաշնակի նուագով»:

Այնուհետև Չոպանեանին օգնելու համար Կոմիտասը նամակում ուշում է երաժշտական այն բառերի հայերէն թարգմանութիւնը, որոնք ինքն է յօրինել: «Աշխատութեանս վերնագիրը,- գրում է Կոմիտասը,- դիտմամբ «Նայ գեղջուկ երաժշտութիւն» դրի, որովհետեւ քաղաքացիք ոչ մի ժողովրդական երգ չեն սրելոծել, իսկ ժողովրդական բառը շատ ընդհանուր է և ընդգրկում է բոլորին, այնինչ այս երգերը յարկապէս գեղջուկի սրելոծագործութիւններն

են, իսկ աշխատության մեջ ժողովրդական բառը գործածել են, որովհետև գրագետներն ու կրթյալներն իրենց համարում էին աշխատողներ և ուսուցիչներ, մանավանդ, երբ երգի հետ է միացած:

«Նայ գեղջուկ երաժշտություն» ուսումնասիրությունը Կոմիտասը մի ընծայականով նուիրում է Ա. Մանթաշեանին, «որովհետև, - գրում է նա - նորան եմ պարտական արդի ուսմանս պաշարով»:

ՊԲՆ, 1958, թ. 1, էջ 254:
ՉԱԳ-ԱԹ, Կոմիտասի ֆ., 676:

Նոկրենմեր 2, Փարիզ. - Կոմիտասը նամակ է գրում Մ. Բաբայանին և Կրեմլին է պահում Փարիզ ժամանելու մասին: Միաժամանակ յայտնում է նրան, որ բնակում է Ժան Գուտին փողոցի թ. 15 տանը:

ՉԱԳ-ԱԹ, Կոմիտասի ֆ. 1344:

Նոկրենմեր 7, Փարիզ. - Յովհաննէս Մկրտչի փոստի օրը Կոմիտասը երգում և դպիրություն է անում Փարիզի հայկական եկեղեցում:

ՉԱԳ-ԱԹ, Կոմիտասի ֆ. 1344:

Նոկրենմեր 23, Փարիզ. - Կոմիտասը նամակ է գրում Մ. Բաբայանին. «Երգերի մի մասի արտագրությանը եմ գրադրում, - գրում է նա, - որ երգիչների բաժինը քարափայ (լի-տոգրաֆ պապարություն) պէտք է լինի»: Վերջում Կոմիտասը խոստանում է հինգշաբթի օրը (25-ը նոկրենմերի) այցելել նրան և հետը պահել «թե՛ երգերի բաժնը և թե՛ Շուշիկի նուագելիք «Մշոյ պարի» նախանուագը»:

ՉԱԳ-ԱԹ, Կոմիտասի ֆ. 1341:

Նոկրենմեր 25 - 20 նոյեմբեր, Փարիզ. - «Շեմք և ընկերություն» հրապարակչությունը լիտոգրաֆիական եղանակով լոյս է ընծայում Կոմիտասի ղեկավարած նուագահանդէսի ընթացքում (1-ը նոկրենմերի) կատարուելիք խմբերգերի նոտաները և Կրեմլինը լսելու նպատակով հայտնել, որպէսզի ֆրանսիացի երգիչները կարողանան օգտուել դրանցից (62 էջ):

Բով. «Միփանայ քաջեր», «Արագեազ սարն ամպել ա», «Մեր դռներ», «Քայլերդ և սայլերդ», «Նայր մեր», «Նիշեցուք», «Մեռայ բազում բանելէն», «Ծիրանի ծառ», «Իմ չինարի ետքը», «Գարուն ա, ձուն ա արել», «Շողեր ջան», «Լուսնակն անուշ», «Քեկեր-ցուր», «Սարերի վրով գնաց», «Էս գիշեր», «Լոռուայ գութաներդ», «Ձիգ քու, քաշի», «Խորհուրդ խորին», «Ո՛վ զարմանալի», «Այսօր ձայնն հայրական»:

ՉԱԳ-ԱԹ, Կոմիտասի ֆ. 624:

[Սեպտեմբեր-նոկրենմեր], Վաղարշապատ. - Երևանի նահանգապետը նկարի ունենալով, որ Կոմիտասը օտարահայտակ է, պարտուակ բռնելով, որ Վաղարշապատը քաղաք չէ, մերժում է Գ. Լեոնեանի և Կոմիտասի «Գեղարուեստ» անունով հանդէս հրապարակելու համար ներկայացրած խնդրագիրը:

Գ. Լեոնեան, Յուշեր, 1959, էջ 125:

Նոյեմբեր, Փարիզ.- Կոմիտասն իր շուրջը համախմբելով հայ եւ ֆրանսիացի երգիչներին՝ կազմում է մի երգչախումբ եւ Կոմիտասի կերպով սկսում է նախապարաստել Փարիզում կայանալիք հայկական նուագահանդեսին: Կոմիտասի կազմած երգչախմբի մեջ էին Մարգարիտ Եւ Շուշանիկ Բաբայան քոյրերը, Փարիզի կոնսերվատորիայի ուսանողներ Արմենակ Շահմուրադեանը եւ Մուդունեանը, նաեւ մի քանի երգիչներ: Գրանդ օպերայից ու Օպերա կոմիկից: «Կոմիտասը,- գրում է Մարգարիտ Բաբայանը,- մեկ ինձ էր սովորեցնում նոր եղանակները, մեկ աշակերպիս՝ Մուդունեանին, խրատում, յետոյ սովորեցնում Շահմուրադեանին, մեկ խմբի եղանակները երգում եւ Lamoureux-ի շատ անուանի խումբը փորձում եւ հեղինակը չարաչարում հայերէն արտասանելու եւ զգացնելու համար, մեկ էլ թրոջս դաշնամուրի համար Մշոյ պարերն էր հարմարեցնում»:

«Նառասարդ», 1914, էջ 304:

[Նոյեմբեր, երկրորդ կես], Փարիզ.- Կոմիտասը նամակ է գրում Ա. Չոպանեանին եւ յայտնում է նրան, որ բայերի անյաջող արտասանության պատճառով հրաժարուել է ֆրանսիացի երգիչներին trio սովորեցնելու մտքից: Միաժամանակ Կոմիտասը պահում, որ ղեկավարների 1-ի համերգին մասնակցելու են Շուշանիկ եւ Մարգարիտ Բաբայանները, Ա. Շահմուրադեանը, Մուդունեանը եւ ֆրանսիացի Ֆրայդը: Ցայրում է նաեւ իր որդիները. «Օպարներին,- գրում է նա,- շատ քիչ էի ուզում Կոմիտասի, որպեսզի զուր հայկական ուժեր երևան»: Կոմիտասը նամակում ներկայացնում է ուղարկում համերգների ընթացքում կատարելիք երգերի ցանկը:

«Սովորական արուեստ», 1962, թ. 9, էջ 53:

Նոյեմբեր [25-30], Փարիզ.- Կոմիտասը նամակ է գրում Էջմիածին՝ Կ. Կոստանեանին եւ Կոմիտասին պահում նրան, որ Փարիզում Կոմիտասի նախապարաստական աշխատանքներն աւարտում են, որ Կոմիտասի երգիչներից 30 հոգի հայերի հետ միասին մասնակցելու են համերգին: Միաժամանակ յայտնում է, որ երաժշտագետների միության նախագահից հրաւեր է ստացել ղեկավարների 6-ին դասխոսություն կարդալու համար:

Անդ:

[Նոյեմբեր], Փարիզ.- Նայկական միության միջոցներով Ե. Դեմեի երաժշտական գործակալության հրապարակչությամբ «Concert de musique armenienne populaire liturgique» վերնագրով լոյս է ընծայում ղեկավարների 1-ին Կոմիտասի ղեկավարությամբ Կոմիտասի յայտագիրը (ֆրանսերէն, 8 էջ):

ՉԱԳԱԹ, Մ. Բաբայանի ֆ. 127:

Դեկտեմբեր 1 (ն. ր.), Երեկոյան, Փարիզ.- Նայկական Միության ու Արշակ Չոպանեանի նախաձեռնությամբ եւ Կոմիտասի ջանքերով «Salle des agriculteurs»-ի սրահի մեջ Կոմիտասը եւ ունենում Կոմիտասի գլխավորած հայկական նուագահանդեսը: «Salle des agriculteurs»-ի մեծ սրահը,- գրում է Մ. Բաբայանը,- ծայրից ծայր լիքն էր... Վարդապետը խիստ ու վսեմ հագուստով, ինչպէս մի զարմանալի Կոմիտաս, հին քրիստոնեական դարերու, որ

արդեն զգացուած ֆրանսիացի գեղարուեստասէրների հոգին խռովել էր, մօտենում է փոքրիկ երգեհոնին և ինքն իրեն դաշնակցելով սկսում է մեղմամեղմ «Տիրամայրը» խաչի երգը: Ամբողջ հասարակությունը կարծես պապանձուել էր, մարդիկ կարծես իրենց շունչը պահել էին, որ աւելի եւս կարողանան ըմբռնել այդ անասելի ցաւին հեղ մեր ազգային դարաւոր աղերսանքին վսեմ եղանակը: Տպաւորությունը անպարմելի էր»:

Կոմիւրասից բացի համերգին մասնակցում են Շուշանիկ և Մարգարիտ Բաբայեան բոլորերը, Փարիզի կոնսերւատորիայի ուսանողներ Արմենակ Շահմուրադեանն ու Մուդունեանը:

Երգեցիկ խումբը բաղկացած էր երեսուն հոգուց: Նայերից բացի մասնակցում էին նաև Փարիզի Colonne և Lamoureux երգչախմբի անդամները:

Յայտագիրը բաղկացած էր բացառապէս Կոմիւրասի մշակած և ձայնագրած խմբերգերից ու մեներգերից: Նոգեւոր-եկեղեցական երգերից համերգի ընթացքում կատարում են «Նայր մեր», «Տիրամայր», «Տէր ողորմեա», «Յիշեցուք», «Խորհուրդ խորին», «Նախկ մի պայծառ փեսի», «Ո՛վ զարմանալի», «Գեղ, մի զարհուրի», «Այսօր ձայնն հայրական»: Աւելի հարուստ ու բազմազան էր ժողովրդական երգերի ցանկը: Նուագահանդէսում կատարում են «Միփանայ քաջեր», «Նով արէք», «Ալագեազ սարն ամպել ա», «Մեր դռանը խնկի ծառ», «Անձրեն եկաւ շաղալէն», «Զինար ես, կեռանալ մի», «Արի, արի քն մաքաղ», «Թող արա, եզօ ջան», «Ծիրանի ծառ», «Իմ չինարի յարը», «Գարուն ա, ձուն ա արել», «Կռունկ», «Լուսնակն անուշ», «Ամպել ա, ձին չի գալի», «Նաբբբան», «Քեղեր-ցուր, իմ յարը», «Սարերի վրով գնաց», «Էս գիշեր լուսը փեսայ», «Օրոր» (Ակնայ) և «Զիզ փու, քաշի»:

Նուագահանդէսն ունենում է աննախադէպ յաջողութիւն, համարներից մի քանիսը ունկնդիրների պահանջով կրկնում են: Կոմիւրասի անձը մեծ փաւորություն է թողնում ներկաների վրայ:

Համերգի մասին առանձնակի գովեստով են արտայայտւում երաժշտական փեսաբաններ Լուի Լալուան, Պոլ Կիոն և ուրիշներ: Նուագահանդէսի մասին հիացմունքի ու դրուստանքի խօսքեր կան փարիզեան երաժշտական պարբերականներում: «Agricuteurs»-ի ոչ փոքր սրահը լեւի-լեցուն էր ունկնդիրներով: Փարիզի գաղութահայերից բացի համերգին ներկայ էին ֆրանսիական թերթերի երաժշտական փեսաբանները, Գրանդ օպերայի փնօրէնը, Լուի Լալուան, Պոլ Կիոն, Պուրկօ Տիւքապրեն: Մորիս Պուշորը, ականաւոր երաժշտագէտներ, կոմպոզիտորներ, գրողներ և Փարիզի երաժշտաւէր հասարակութեան մի զգալի մասը:

«Անահիթ», 1906, թ. 10-12, էջ 240:

«Արարար», 1907, թ. 1-2, էջ 142:

Նոյն օրը, Փարիզ. Կոմիւրասի փութը երգահանդէսի առաջին բաժնից յետոյ Արշակ Չոպանեանը կարդում է «Նայ երաժշտութեան և բանաստեղծութեան մասին» մի ընդարձակ բանախօսութիւն, որի գերակշիռ մասը նուիրուած էր Կոմիւրասի գործունէութեանը:

«Անահիթ», 1906, թ. 10-12, էջ 240:

Նոյն օրը, Փարիզ. «Le monde musical» հանդեսում հրապարակում է դրուսարական յօդուած՝ նուիրում դեկտեմբերի 1-ին, երեկոյան Փարիզի «Agriculteurs» սրահում Կոմի-պասի րում հայկական համերգին: «Ահա նուագահանդէս մը,- գրում է յօդուածագիրը,- որ մեզի կուրայ նորութիւն, որ մեզի կուրայ անսխալ բան մը, որ մեզի կրանի հետուն եւ մեզ կապեցնէ կեանքը ժողովրդի մը, գոր չենք ճանչնար: Պուրկօ-Տիքուրբէի լեզուն պէտք էր՝ գաղափար մը րալու համար համեղութեանը վրայ այդ ժողովրդական կամ եկեղեցական երգերուն, գոր Կոմիպաս վարդապետը մեզի կրերէ Նայաստանէն ու դարձեալ բաւական չէ. պէտք է անձամբ րեսնել սիրուէրը այդ երկար, սեւ արուեստականին, որուն բարձր վեղարը կվերացնէ սրուերի անկումը, որ կթափի իր անձէն. պէտք է անձամբ զգալ խորհրդաւորութիւնը, քաղցր մեղամաղձութիւնը, հնչական շքեղութիւնը այդ երգերուն, որ ամենակարողին կաղերսեն կամ կպանծացնեն բարութիւնները, բնութեան սիրական զեւիւրը, դրան առջեւ ծաղկող «Խնկի ծառը», «Բարերար անձերը», «Ջան եզը», «Աղբեր եզը»:

Նոյն օրը, Փարիզ. «Mercure musical» երաժշտագիտական հանդեսում հրապարակում է հանդէսի րուրէն Լուի Լալուայի յօդուածը՝ նուիրում դեկտեմբերի 1-ին Փարիզում Կոմիպասի րում երգահանդէսին: «Մեր նախորդ նամակին մէջ,- գրում է Լուի Լալուան,- հրապարակում եղանակները եւ պ. Չոպանեանի պերճաբան խօսքերը այնքան բարձրօրէն կգովեն հայ երաժշտութիւնը, որ ոչ ոք չափազանցութեան մեղադրանք պիտի ընէ ինձի, եթէ ըսեմ թէ այս նուագահանդէսը յայրնութիւն մը եւ գմայլանք մը եղաւ: Մեզինք ոչ ոք, կարծեմ բացի այդ մասին ծանօթութիւն ունեցող սակաւաթիւ անձերէ, կրնար մրբն անցնել գեղեցկութիւններն այդ արուեստին մէջ, որ իսկապէս ոչ երոպական է, ոչ արեւելեան, այլ ունի նկարագիրը աշխարհիս մէջ մէկ հայրիկ՝ շնորհալի քաղցրութիւն, խորաթափանց յուզման եւ ազնի գորովի: Եղանակներ փափուկ եւ սակայն, որոշ թաւալումներով, ճկուն ու կենդանի կշռոյթներ, երաժշտութիւն մը, որ ամբողջապէս սրտէ կրխէ եւ կետսի ինչպէս ջութ մը գով, թափանցիկ ու պայծառ: Արեւկայ այդ երգերու մէջ, բայց ոչ լափող արեւը Արաբիոյ եւ Պարսկաստանի անապարներուն, լոյս մը ոսկեգօծ, համակ երկնային, որուն ջերմութիւնը փայփայանք մըն է սարերու սպիտակութեանը, անրառներու կանաչութեանը եւ կարկաչող առուակներու ցոլքերուն»: «Աշխարհանքի երգերը,- շարունակում է նա,- երկայն կոչաղաղակներ՝ հարուստ ճայնոյրումներով, մէկ լեռնէ միւսը արձագանքելու սահմանում եւ աշխարհանքի մղելու «ջան» եզը, եղբայր բարեկամը, գրեթէ սրտակիցը հայ երկրագործին: Ու դարձեալ՝ ողբեր, ուր լքումին կամ պանդխտութեան ամբողջ րրքմութիւնը կարգաշնչուի ազարօրէն,- որովհետեւ ոչ մեղադրանք կառնուի անոր, ոչ ընդվզում: Եկեղեցական երգերը, նոյնպէս բոլորովին ժողովրդական, ոչինչ ունին այն քիչ մը վախկոտ հանգամանքէն, որ մեր գրիգորեան երգեցողութիւնը կապում կպահպանէ նոյնիսկ իր յոյսի ու վստահութեան պահերուն մէջ. ապունք գեղումներն են հոգիի մը, որ ինքզինքը ամբողջովին կբանայ իր Աստծուն եւ անոր կհանձնէ սիրոյ խոյանքի մը մէջ, իր բոլոր մրածումներն ու իր կեանքն ամբողջ, անոնց մէջ թրթռալը կզգացուի հրաւառ ու միասրիկական հաւաքի մը, որ առանց ճիգի կհանէ հափշտակութեան կարարներուն, որուն մեր Արեւմուրքին մէջ սակաւաթիւ ընրրեւալները կրցած են բարձրանալ, վերջապէս՝ պարերը չունին մեր հապճեալ, ոչ ալ մեր կշռական

կարծրությունները, մերթ ծանր ու կրօնաշունչ, մերթ մեղմ, ինչպես երգ մը սիրոյ, կամ թեթև՝ անմեջ հրճուանքով մը, անոնք միշտ խորապէս արքայայտիչ են, ճշմարիտ երաժշտութեան ներդաշնակ ու ազաւոր գեղեցիկ մարմիններու»։ «Կոմիտաս վարդապետը, որ քաջութիւն ունեցաւ գալ խմբերգը ղեկավարելու եւ ինքն իսկ մեղօղիաներ երգելու «Տիրամայրի» մեջ, բարձրացաւ յուզմունքի այնպիսի ներուժութեան մը, որ գրեթէ արցունք բերելու աստիճան կհասնէր եւ որուն համար հասարակութիւնը «օվասիօն» մը ըրաւ իրեն։ Ոչինչ աւելի սրտաշարժ էր, քան Կոմիտասի հասարակութեան ծափերին առջեւ իր խոնարհիլը քաղցրութեամբ ու վեհութեամբ՝ սեւ բարձր վեղարին Կոմիտասի, յետոյ դարձեալ նստիլը «Միսթէլ» երգեհոնին առջեւ ու կրկնիլը Կոմիտասի վերջին Կոմիտասը, երգելով զայն գրեթէ ցածր ձայնով, մեծ վիշտերու գաղտնիքին մեջ, երկրամած կարեկցութեան ու ամփոփումով խոկման շեշտերով, որ աստուածային ներկայութիւնը զգալի կընեն»։

«Քիչ անգամ Կոմիտասը եւ աւելի լեցուն ու խանդավառ սրահ մը։ Կոմիտաս վարդապետը, որուն կայարկանի այդ մեղօղիաները հաւաքած եւ անոնց գեղեցկութիւնը առաջին անգամ զգացած ըլլալու պարիսրը, ինքզինքը յայտնեց հնարամիտ ու փափկաճաշակ երաժիշտ մը (կոմպոզիտոր), որովհետեւ անոնցմէ շարքերուն կցած էր դաշնակի կամ խմբի ընկերացում մը, ուր կ'ընտելանային ամենաճիշտ ու ամենամաքուր զգացում մը ազգային «թոնալիթէին» եւ գոյնին։ Ժողովրդական մեղօղիաներու ընկերացման հարցը շարք դժուար լուծելիք խնդիր մըն է։ Բայց պէտք է գանգաւորիլ, երբ ճարտար ու պարկառօք ձեռքեր կկարարեն այդ զգեստաւորումը, գոր մեր ականջներուն նախապաշարումը թերեւս հարկաւոր կկացուցանէ, կամ գոնէ օգտակար՝ ի սկիզբան»։

«Անահիտ», 1931, թ. 1-2, էջ 27-29:

Դեկտեմբեր 20, Փարիզ. Կոմիտասը նամակ է գրում Մարգարիտ Բաբայեանին, նրան է ուղարկում երկու հարումով նուագարանով շարական, որպէսզի վերջինս սովորի, քրոջ՝ Շուշանիկ Բաբայեանի եւ երաժշտագետ Լուի Լալուայի հարսանեաց հանդէսի ընթացքում կարարելու համար:

ՉԱԳ-ԱԹ, Կոմիտասի ֆ. 1343:

Դեկտեմբեր 21 (ուրբաթ), Փարիզ. Կոմիտասը խոստովանեցնում է հաղորդութիւն է Կոմիտաս մէկ օր յետոյ ամուսնացող Շուշանիկ Բաբայեանին:

ՉԱԳ-ԱԹ, Կոմիտասի ֆ. 1343:

Դեկտեմբեր 22, Փարիզ. Կոմիտասը նամակ է գրում Արշակ Զոպանեանին եւ խնդրում է նրան «Le Mercure musical» հանդէսի տնօրէնները հետը բերել եկեղեցի, որպէսզի կարողանայ իր մասին եղած յօդուածը արտագրել:

«Մովեդական արուեստ», 1962, թ. 10, էջ 53:

Նոյն օրը (շաբաթ), Փարիզ.- Կոմիտասը լուսատրչական ծեսով Յովհաննէս Մկրտիչ եկեղեցում պսակադրում է Մ. Բաբայեանի քրոջը՝ Շուշանիկ Բաբայեանին և երաժշտագետ Լուի Լալուային:

ՉԱԳԱԹ, Կոմիտաս ֆ. 1343:

Դեկտեմբեր, Փարիզ.- «Անահիտ» ամսագրում «Նայկական նուագահանդէս ի Փարիզ» ընդհանուր խորագրի տակ հրապարակում է Կոմիտաս վրդ. «Salle des agriculteurs» սրահի մէջ դեկտեմբերի 1-ի պուած նուագահանդէսի համառօտ նկարագրութիւնը:

«Անահիտ», 1906, թ. 10-12, էջ 240:

[Սեպտեմբեր-դեկտեմբեր], Էջմիածին.- Եղիշէ Թադևոսեանը նկարագրում է Կոմիտասի «Նայ քնար» խորագրով ժողովածուի անուանաթերթը:

«Նայ քնար», Փարիզ, 1907:

[Նոկտեմբեր-դեկտեմբեր], Փարիզ.- Կոմիտասը և բժիշկ Առաքել Օհանեանը ծանօթանում են: «Այդ համեստ և նուրբ մարդու հետ,- գրում է վերջինս,- ծանօթացայ Փարիզում 1906 թ. ևս հպարտ եմ նրա բարեկամութիւնը վայելած լինելու համար: Անհունօրէն երջանիկ էի համարեա ամեն օր նրան հանդիպելու յայտնի երգչուհի օր. Մ. Բաբայեանի տանը, որ հայ երաժշտութեան անխնայ մշակողն ու տարածողն է Արևմուտքում»:

«Անահիտ», 1935, թ. 1-2, էջ 76:

[Նոյն շրջանում], Փարիզ.- Պիեռ Օրբին Կոմիտասին առաջարկում է «Նագար ու մի խաղ» գրքոյի ֆրանսերէն հրատարակութեան վաճառքի գումարից տպագրական ծախքերը հանելուց յետոյ 50 տոկոսը վճարել նրան: Բայց Օրբին ցանկութիւն չի ցուցաբերում գէթ առանձն վճարել, ուստի ևս Կոմիտասը մերժում է հրատարակութեան իրաւունքը: «Կոմիտասը,- գրում է Ա. Չոպանեանը,- բարկացաւ, Օրբիի պայմանները վաշխառուական գրաւ և մերժեց»:

Նկարագայում, երբ Մ. Արեղեանը հարցնում է Կոմիտասին, թէ գտնուելով Փարիզում, ինչո՞ւ է այդքան սակտաթիւ երգեր հրատարակել, «Կոմիտասը,- գրում է Արեղեանը,- սկսեց կծու խօսքեր ուղղել ևս արեւելեան, ևս արեւմտեան հարուստների հասցէին»:

«Անահիտ», 1931, թ. 1-2, էջ 109:

«Ժամ. Կոմիտասի մասին», 1960, էջ 71:

[Նոյն շրջանում], Փարիզ.- Կոմիտասը Արշակ Չոպանեանի տանը հրաւիրուած ճաշկերոյթին ծանօթանում է իրաւացի արձանագործ Անդրեոթիի և Տիրան Ալեքսանեանի հետ:

Ներկաների խնդրանքով Կոմիտասը կատարում է «Արի՛, արի՛, քե՛ մաքաղ» երգը։ Լսելով Կոմիտասի երգը՝ Անդրեաթինն ասում է. «Դուք՝ հայերդ, այսպիսի երաժշտություն ունեք եւ մայրաքաղաքից մայրաքաղաք չեք գնում ամբողջ մարդկությանը այն յայտնելու»։ «Ես այդ երգերը բազմաձայն դաշնակած եմ,- ասում է Կոմիտասը,- եթէ զայն խմբէ մը իմանաք, աւելի խորը փայտորություն կկրէք»։ «Ոչ,- ասում է իտալացի քանդակագործը,- պէտք չկայ ո՛չ դաշնակունի, ո՛չ խմբի, կբաւէ, որ դուք միմակ բեւմ էլլէք եւ այդ հրաշալի երգը Ձեր այդ հրաշալի կերպով երգէք»։

«Անահիտ», 1931, թ. 1-2, էջ 112: